# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

## ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

**1. Անուն, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը**

Գոհարիկ Հովհաննիսյան, ՀՀ ֆինանսների նախարարության իրավաբանական վարչության օրենսդրության բաժնի պետ

**2. Գործուղման վայրը և ժամկետները**

ք. Հաագա (Նիդերլանդների Թագավորություն), 2024 թ. հունվարի 30 – փետրվարի 2-ը

**3. Հրավիրող կողմը**

Նիդերլանդների Թագավորության ֆինանսների նախարարություն

**4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)**

Մասնակցություն Նիդերլանդների Թագավորության ֆինանսների նախարարության կողմից կազմակերպված «Խարդախության և խախտումների դեմ պայքար / Event on Combatting fraud and irregularities» թեմայով միջոցառմանը:

**5. Քննարկված թեմաները**

- Կոռուպցիան ու խարդախությունը ԵՄ տեսանկյունից
- Խարդախության համակարգի ընդհանուր նկարագիրը
- Քննարկում խարդախության ու կոռուպցիայի վերաբերյալ
- Խարդախության ու կոռուպցիայի ռիսկերի հսկողության գործիքակազմը
- Կոռուպցիայի և խարդախության դեմ պայքարի վերաբերյալ քննարկում

**6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը**

Միջոցառման նպատակը երկրների ֆինանսների նախարարություններին և համապատասխան հասարակական կազմակերպություններին տնտեսության և պետական հատվածի բարեփոխմանն ուղղված ջանքերում աջակցելն է՝ կենտրոնանալով հիմնականում հանրային ֆինանսների կառավարման վրա և Նիդերլանդների Թագավորության լավագույն

փորձը օգտակար կարող է լինել այդ նպատակին հասնելու համար: Միջոցառման ընթացքում ներկայացվել է կոռուպցիայի և խարդախության վերաբերյալ ԵՄ իրավահամակարգում գործող կարգավորումները: Նիդերլանդների Թագավորության կենտրոնական կառավարության աուդիտի ծառայությունը (CGAS) Նիդերլանդների կենտրոնական կառավարության անկախ ներքին աուդիտի գործառույթն է: Կենտրոնական կառավարության աուդիտի ծառայությունը կառավարման առումով ֆինանսների նախարարության մաս է, բայց անկախ բոլոր նախարարություններից: CGAS-ը աուդիտորական եզրակացություններ է տրամադրում նախարարությունների ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ, իրականացնում է աուդիտ ըստ անհրաժեշտության և պահանջի, խթանում է համագործակցությունը տարբեր գերատեսչությունների միջև կառավարական աուդիտի ոլորտում: Կենտրոնական կառավարության աուդիտի ծառայությունն իր գործունեությամբ ակտիվորեն նպաստում է կառավարման, ղեկավարության և հաշվետվողականության աուդիտների որակի բարելավմանը: Աուդիտի ծառայության մասնագետների կողմից ներկայացվել է իրենց կողմից մշակված և աուդիտների ընթացքում կիրառվող խարդախության ու կոռուպցիայի ռիսկերի հսկողության գործիքակազմը:

**7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը**

Առկա չեն

**8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները**

Առկա չեն

**9. Ստորագրությունը, ամսաթիվը**

Փետրվարի 5, 2024թ.